ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 հուլիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

91
(3300)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՐԵՎԷ ՊԱՇՏՈՆԻ ՉԻ ՆՇԱՆԱԿՎՈՒՄ

Վերջին օրերին քաղաքական կուլիսներում նոր թափով քննարկվում է Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի քաղաքական ապագան: Քննարկումների պատճառ դարձավ ոչ միայն Սիմոնյանի վերջին հրապարակային այցը եկեղեցի՝ մեղքերի թողության, այլեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի հետ հանդիպման ընթացքում հնչեցրած հայտարարությունը: Փաշինյանը, դիմելով Հանրապետության նախագահին, ասաց. «Տեղի ունեցան հերթական խորհրդարանական ընտրություններ, եւ «Քաղաքացիական պայմանագիր»-ն ունի խորհրդարանում մանդատների մեծամասնություն, եւ կձեւավորենք կառավարություն: Ուզում եմ նաեւ շնորհակալություն հայտնել նախորդող շրջանում կառավարության գործունեությանը Ձեր աջակցության համար: Առաջիկայում, իհարկե, առիթ կունենանք խոսելու արդեն նոր ձեւավորվող կառավարության մասին, նաեւ նոր ձեւավորվող կառավարության ծրագիրը պետք է ընդունենք եւ, իհարկե, իրականացնենք»:

Այս հայտարարությունը մեկնաբանվեց իբրեւ հրապարակային ազդակ, որ իշխանությունը շարունակում է վստահել գործող նախագահ Վահագն Խաչատուրյանին եւ նրա պաշտոնավարման հարցը ներկայումս չի դիտարկում որպես փոփոխության ենթակա: Մինչդեռ եղել էին հրապարակումներ, որ Ալեն Սիմոնյանը կարող է հավակնել Հանրապետության նախագահի պաշտոնին, սակայն Փաշինյանի վերջին հայտարարությունից հետո այդ սցենարին վերջակետ դրեցին: Ալեն Սիմոնյանը ՀՀ նախագահ չի լինելու:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է մանրամասն ուսումնասիրել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքային, ֆինանսական եւ շահերի հայտարարագրերը: Այս անգամ մեր ուշադրության կենտրոնում է Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի եւ նրա ընտանիքի բազմամյա ֆինանսական պատմությունն ու ունեցվածքը: Հիշեցնենք, որ Սերգեյ Բագրատյանն ունի բավականին ուշագրավ քաղաքական կենսագրություն. նախկինում նա եղել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ, 2017 եւ 2018 թվականների ԱԺ ընտրություններում պատգամավոր է ընտրվել ԲՀԿ-ի համամասնական ցուցակով, սակայն 2020 թվականի հուլիսին լքել է այդ խմբակցությունը: Արդեն 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններին նա մասնակցել է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակով եւ կրկին ստացել պատգամավորական մանդատ՝ պաշտոնը ստանձնելով 2021 թվականի օգոստոսի 2-ից: Պատգամավորի տարիների հայտարարագրերի համադրումը ցույց է տալիս, որ թեեւ նրա անձնական ունեցվածքը թղթի վրա բավականին համեստ է թվում, սակայն ընտանիքի անդամները, մասնավորապես կինը՝ Նաիրա Հակոբյանը, տիրապետում են ահռելի կարողության, ինչն ուղեկցվում է աղմկահարույց բիզնես եւ քրեական պատմություններով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

2026 թվականի մայիսի 27-ին առաջին ատյանի դատարանը Վարդան Ղուկասյանի որդուն՝ Սպարտակ Ղուկասյանին, կալանավորելու որոշում էր կայացրել: Ղուկասյանի խափանման միջոցի հարցը պետք է քննվեր հունիս ամսին, սակայն դատախազությունը արտահերթ նիստ նշանակելու միջնորդություն էր ներկայացրել: Սպարտակ Ղուկասյանի պաշտպան Հովհաննես Ղարաքեշիշյանը հայտնել էր. «Ծանուցում ենք ստացել դատական նիստի նշանակման մասին, սակայն հայտնել ենք, որ չենք կարող մասնակցել՝ ծանրաբեռնվածության պատճառով»: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ նա տնային կալանքի տակ գտնվելու ժամանակ իբր կանոններ է խախտել: Արդյունքում պաշտպանական կողմը որոշումը բողոքարկել էր ՀՀ վերաքննիչ դատարան, եւ դատարանը որոշում է կայացրել Սպարտակ Ղուկասյանի խափանման միջոցը փոխել եւ կրկին տնային կալանք խափանման միջոց կիրառել: Այս պահին Սպարտակ Ղուկասյանը ԱԱԾ մեկուսարանում է, եւ մնում է հետեւել իրադարձությունների զարգացմանը, թե երբ նրան ԱԱԾ մեկուսարանից տուն կուղարկեն՝ կալանքը կրելու: Հիշեցնենք, որ Սպարտակ Ղուկասյանին մեղադրանք էր առաջադրվել 2025 թվականի նոյեմբերին: Այդ օրը ՔԿ-ն հայտնել էր, որ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում 1 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կատարված խուլիգանությունը):



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առյուծների առգրավման գործողությունը լուրջ բախումների պատճառ է դարձել Քննչական կոմիտեի, Երեւանի կենդանաբանական այգու եւ ՍԱՏՄ-ի միջեւ, մինչդեռ կենդանիների տեղափոխման ընթացքում թույլ տրված սխալների հետեւանքներն արդեն ողբերգական են եղել. 1 առյուծ սատկեց: Գագիկ Ծառուկյանի կալանավորումից հետո հանրային քննարկումները չեն դադարում: Մի կողմում իրավապահների կողմից 70-ամյա, դիմադրություն չցուցաբերող անձի նկատմամբ կիրառված ուժի համաչափության հարցն է, մյուս կողմում՝ նրա առանձնատան տարածքից առգրավված կենդանիների ճակատագիրը, որն օրեցօր ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ տալիս: Առգրավման գործողությունների հետեւանքով արդեն արձանագրվել է առնվազն մեկ առյուծի մահ, իսկ մյուս կենդանիների առողջական վիճակի վերաբերյալ պաշտոնական եւ ամբողջական փաստարկված տեղեկություն մինչ օրս չի հրապարակվել: Քաղաքապետարանը, հղում անելով կարանտինային ռեժիմին, փաստացի սահմանափակել է լրագրողների մուտքը կենդանիների պահման վայր, ինչի հետեւանքով հանրությունը զրկված է սեփական աչքով համոզվելու, թե ինչ վիճակում են Ծառուկյանի կենդանիները:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿԱՐԵՎՈՐՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ Է, ՈՉ ԹԵ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ»

ArmLur.am-ը Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանից հետաքրքրվեց Ալեն Սիմոնյանի ճակատագրին արժանանալու մասին:

- Պարոն Մկրտչյան, Ձեր քաղաքական ապագայի վերաբերյալ հարց կա: Շարունակելո՞ւ եք պաշտոնավարել որպես մարզպետ, թե՞ հնարավոր են փոփոխություններ:

- Մարզպետի նշանակումը վարչապետի իրավասությունն է, եւ այս փուլում որեւէ բան ասել չեմ կարող: Ինչպես վարչապետը որոշի, այդպես էլ կլինի:

- Վարչապետը գո՞հ է Ձեր աշխատանքից:

- Դա պետք է հարցնել վարչապետին: Ես իմ աշխատանքը կատարում եմ հնարավորինս բարեխղճորեն եւ ամբողջ ուժերով:

- «Քաղաքացիական պայմանագրի» ներկայացուցիչները հաճախ ասում են, որ բոլոր որոշումները կայացվում են թիմային քննարկումների արդյունքում: Այդ դեպքում ինչպե՞ս ստացվեց, որ Ձեր պաշտոնավարումը կախված է մեկ անձի՝ վարչապետի որոշումից:

- Մարզպետի նշանակումն օրենքով վարչապետի իրավասությունն է: Այդ պատճառով էլ վերջնական որոշումը կայացնում է վարչապետը:

- Տեղեկություններ կան, որ պատրաստվում եք առաջադրվել Վանաձորի քաղաքապետի պաշտոնում, եւ այդ նպատակով նույնիսկ բնակության վայրը փոխել եք: Որքանո՞վ են այդ տեղեկությունները ճիշտ:

- Այս պահին նման որոշում չկա: Բնակության վայրի փոփոխությունը կապված էր այն հանգամանքի հետ, որ ընտրությունների օրը չէի կարողանալու գնալ Ալավերդի, որտեղ գրանցված էի: Դա որեւէ

կերպ պետք չէ կապել քաղաքապետի թեկնածու առաջադրվելու հետ:

- Բայց հնարավո՞ր է, որ հետագայում առաջադրվեք:

- Այս պահին նման որոշում չկա:

- Վանաձորցիները ցանկանո՞ւմ են, որ Դուք ղեկավարեք քաղաքը:

- Դա ցույց կտան միայն ընտրությունները: 2026 թվականի համապետական ընտրություններում Վանաձորի բոլոր 63 տեղամասերում Քաղաքացիական պայմանագիրը հաղթել է: Իսկ տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքը պարզ կլինի միայն քվեարկությունից հետո:

- Մարզպետի պաշտոնից քաղաքապետի պաշտոն անցնելը հետքայլ կամ պաշտոնի իջեցում չե՞ք համարի:

- Ինձ համար որեւէ պաշտոն ինքնանպատակ չէ: Կարեւորն աշխատանքն է, ոչ թե կարգավիճակը:

- Ընտրարշավի ընթացքում ի՞նչ տրամադրություններ նկատեցիք բնակիչների շրջանում:

-Մենք շատ ակտիվ քարոզարշավ ենք իրականացրել: Լոռու մարզի 120 բնակավայրերից 117-ում հանդիպել ենք քաղաքացիների հետ: Վանաձորի բոլոր 22 թաղամասերում եղել եմ, տնետուն այցելություններ ենք իրականացրել: Ընդունելությունը, անկեղծ ասած, շատ ջերմ էր եւ նույնիսկ սպասվածից ավելի լավ:

- Այդ վերաբերմունքը կապված էր անձամբ Ձե՞զ հետ, թե՞ կուսակցության աշխատանքի:

- Կարծում եմ՝ նաեւ կառավարության իրականացրած աշխատանքների արդյունքն է: Վերջին տարիներին Վանաձորում իրականացվել են խոշոր ծրագրեր՝ հիմնանորոգվել են տասնյակ փողոցներ, վերանորոգվում կամ նորից կառուցվում են դպրոցներ եւ մանկապարտեզներ, հաստատվել են մեծածավալ ներդրումային ծրագրեր, տեղադրվում են նոր վերելակներ այն շենքերում, որտեղ դրանք տասնամյակներով չեն գործել:

- Ոմանք կարծում են, որ Վանաձորում ընդդիմության դիրքերն ավելի ուժեղ են, մասնավորապես՝ Մամիկոն Ասլանյանի: Ի՞նչ կասեք:

- Վերջնական որոշումը միշտ ժողովուրդն է կայացնում: Թե ով կստանա քաղաքացիների վստահությունը, պարզ կլինի միայն ընտրությունների արդյունքներով:

- Իսկ անձամբ Դուք ցանկանո՞ւմ եք շարունակել աշխատել որպես մարզպետ:

- Այս պահին ճիշտ չի լինի այդ հարցին պատասխանել: Այդ որոշումը վարչապետի իրավասության շրջանակում է: Ես շարունակում եմ աշխատել եւ կատարել իմ պարտականությունները:

Զրուցեց՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԵՄ-Ն ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է

2026 թվականի հուլիսի 8-ին Եվրոպական Միությունը Երեւանում կայացած ղաբտոնական հանձնման արարողության ընթացքում Հայաստանին փոխանցեց երկու ականազերծման մեքենաներից առաջինը:

Հանձնումը նշանակալի քայլ է՝ուղղված Հայաստանի կարողությունների ամրապնդմանը՝ հակամարտությունից տուժած տարածքներն ականներից եւ պատերազմի մնացորդային պայթուցիկ նյութերից մաքրելու գործում: Ականազերծման մեքենան Եվրոպական հանձնաժողովի Արտաքին քաղաքականության գործիքների ծառայության կողմից տրամադրվել է Հայաստանի մարդասիրական ականազերծման ազգային քաղաքացիական օպերատոր հանդիսացող Մարդասիրական ականազերծման եւ փորձագիտական կենտրոնին:

Տրամադրված աջակցությունը Եվրոպական Միության՝ Հայաստանի դիմակայունության ամրապնդմանն ուղղված ավելի լայն աջակցության շրջանակում իրականացվող նախաձեռնությունների մաս է: Մասնավորապես, սահմանամերձ համայնքներում ականներն ու պատերազմի մնացորդային պայթուցիկ նյութերը շարունակում են մնալ լուրջ հումանիտար եւ սոցիալ-տնտեսական մարտահրավեր՝ վտանգելով քաղաքացիական անձանց կյանքը եւ սահմանափակելով հողերի գյուղատնտեսական օգտագործման հնարավորությունները:

Այս ոլորտում ԵՄ շարունակական աջակցության շրջանակում 2026 թվականի աշնանը նախատեսվում է տրամադրել եւս մեկ ականազերծման մեքենա, ինչպես նաեւ երկու մասնագիտացված շտապօգնության մեքենա՝ Հայաստանի անվտանգ մարդասիրական ականազերծման կարողություններն ավելի ամրապնդելու եւ ընդլայնելու նպատակով: Բացի այս նոր միջոցներից, Եվրոպական Միությունը կտրամադրի նաեւ վերապատրաստումներ, տեխնիկական փորձագիտական աջակցություն եւ կնպաստի մարդասիրական ականազերծման աշխատանքների գործառնական ծախսերի ֆինանսավորմանը:

«Այս ժամանակակից տեխնիկան հնարավորություն կտա առավել անվտանգ, արդյունավետ եւ արագ իրականացնել ականազերծման աշխատանքները՝ նվազեցնելով մասնագետների համար առկա ռիսկերը: Ականազերծման այս մեքենաները կարեւոր նշանակություն կունենան նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի սահմանազատման աշխատանքների համար»,-նշել է փոխվարչապետ Միեր Գրիգորյանը:

«Ականազերծման մեքենայի շահագործումը ոչ միայն կնվազեցնի ռիսկերը, այլեւ կնպաստի սոցիալ-տնտեսական զարգացմանը»,- նշել է Մարդասիրական ականազերծման եւ փորձագիտական կենտրոնի տնօրեն Էդուարդ Պետրոսյանը:

Ներկայացված մեքենան, ակնկալվում է, որ զգալիորեն կբարձրացնի ականազերծման գործողությունների որակն ու արագությունը: Գործնականում դա նշանակում է ականազերծման աշխատանքներում ներգրավված անձնակազմի առավել արդյունավետ պաշտպանություն, քաղաքացիական օգտագործման համար հողերի ավելի արագ վերադարձ եւ ընդհանուր առմամբ մարդասիրական ականազերծման գործողությունների արդյունավետության բարձրացում:

«Այս մեքենայի շնորհիվ Հայաստանը կկարողանա առավել արագ մաքրել սահմանամերձ տարածքները՝ հնարավորություն տալով ֆերմերներին վերադառնալ իրենց հողատարածքներ, ընտանիքներին՝ ապրել առանց վախի, իսկ հակամարտությունից երկար ժամանակ տուժած համայնքներին՝ կրկին վայելել առօրյա կյանքի բնականոն ընթացքը», - ասել է Եվրոպական հանձնաժողովի արտաքին քաղաքականության գործիքների ծառայության ղեկավար Փիթեր Մ. Վագները:

«Հայաստանի իշխանությունների եւ Եվրոպական միության այս համատեղ ջանքերը կնպաստեն նրան, որ հայ ժողովուրդը զգա խաղաղության առավելությունները, հատկապես սահմանամերձ տարածքներում, որտեղ ականային աղտոտվածությունը լուրջ մարտահրավեր է եղել համայնքների համար»,-նշել է Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոն:

«Այս ականազերծման մեքենայի տրամադրումը եւս մեկ կոնկրետ վկայություն է Հայաստանի դիմակայունության ամրապնդմանն ուղղված ԵՄ աջակցության մասին: Ամրապնդելով Հայաստանի ականազերծման կարողությունները՝ մենք նպաստում ենք մարդկանց անվտանգությանը եւ սահմանամերձ տարածքներում կյանքի բնականոնացմանը», - ասել է Հայաստանում ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԳՈՐԾՈՒՂՎՈՒՄ ԱՄՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության վարչապետը որոշում է ստորագրել, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը 2026 թվականի օգոստոսի 3-7-ը կգործուղվի Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝Նյու Յորք քաղաք:

Ըստ որոշման՝ գործուղման նպատակն է մասնակցել ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի (UN-GGIM) 16-րդ նստաշրջանին:

Որոշման համաձայն՝ Սուրեն Թովմասյանի ԱՄՆ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը կհոգան Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2026 թվականի բյուջեով նախատեսված «Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացում» ծրագրի միջոցների հաշվին:

Միաժամանակ վարչապետը հանձնարարել է, որ կադաստրի կոմիտեի ղեկավարը գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնի Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՊԵՏՔ Է ՀԱՆՎԵՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը հայտարարել է, որ ադրբեջանական կողմն ավարտել է խաղաղության համաձայնագրի վերջնական համաձայնեցման իր աշխատանքը: Այդ մասին, ադրբեջանական APA գործակալության փոխանցմամբ, նա ասել է լրագրողների հետ զրույցում:

Բայրամովը նշել է, որ Վաշինգտոնում կայացած գագաթնաժողովի շրջանակում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ստորագրվել է համատեղ հայտարարություն: «Խաղաղության համաձայնագրի տեքստն արդեն պարաֆացվել է եւ բաց է հանրության համար: Ադրբեջանական կողմի մոտեցումն այս հարցում սկզբունքային է: Պետության պաշտոնական դիրքորոշումն արդեն ներկայացրել է նախագահ Իլհամ Ալիեւը: Մեր ակնկալիքն այն է, որ Հայաստանի Սահմանադրությունից պետք է հանվեն Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջները: Դրանից հետո խաղաղության համաձայնագիրը կարող է ստորագրվել»,- ասել է Ադրբեջանի արտգործնախարարը:

Ա. Վ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹՐԱՄՓԻ ՊԱՀՎԱԾՔԸ ԱՆՀԱՆԳՍՏԱՑՐԵԼ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հակասական եւ հաճախ փոփոխվող հայտարարությունները գերիշխել են Անկարայում անցկացված ՆԱՏՕ-ի երկօրյա գագաթնաժողովի վերջին ժամերին: Այդ մասին գրում է բրիտանական The Guardian պարբերականը:

Ըստ հրապարակման՝ գագաթնաժողովի սկզբում Թրամփը կոշտ քննադատության է ենթարկել դաշնակիցներին՝ նրանց մեղադրելով պաշտպանության համար բավարար միջոցներ չծախսելու եւ Իրանի դեմ ԱՄՆ-ի գործողություններին բավարար աջակցություն չցուցաբերելու մեջ: Նա նաեւ կրկին հայտարարել է Գրենլանդիայի նկատմամբ վերահսկողություն հաստատելու իր ցանկության մասին եւ վիրավորական արտահայտություններ է հնչեցրել Իրանի ղեկավարության հասցեին:

Սակայն ավելի ուշ, ՆԱՏՕ-ի 32 անդամ երկրների ղեկավարների փակ հանդիպման ընթացքում, ԱՄՆ նախագահը փոխել է իր հռետորաբանությունը: The Guardian-ի փոխանցմամբ՝ Թրամփը չի անդրադարձել նախկին քննադատություններին եւ դաշնակիցներին ասել է. «Մենք ցանկանում ենք մնալ ձեզ հետ»:

Հետագայում, Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու հետ հանդիպումից հետո, Թրամփը հայտարարել է, որ նիստի ընթացքում զգացել է «հսկայական սեր» եւ ընդգծել. «Այդ սենյակում շատ սեր եւ մեծ միասնություն կար»: Նա նաեւ անակնկալ առաջարկ է արել՝ Ուկրաինային տրամադրել Patriot հակաօդային պաշտպանության հրթիռների արտադրության լիցենզիա:

Գագաթնաժողովի ավարտին կայացած մամուլի ասուլիսում Թրամփը հիմնականում խոսել է ոչ թե ՆԱՏՕ-ի, այլ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի, ԱՄՆ տնտեսության եւ նույնիսկ TikTok-ում իր ժողովրդականության մասին՝ հայտարարելով, թե ինքն այնտեղ «թիվ մեկ» է:

Չնայած դրան՝ The Guardian-ը նշում է, որ եվրոպացի առաջնորդները գագաթնաժողովի հիմնական ձեռքբերումը համարում են այն, որ Թրամփը վերջում վերահաստատել է ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան պայմանագրի 5-րդ հոդվածին աջակցությունը: Վերջնական հռչակագրում, որը ստորագրել են ԱՄՆ նախագահն ու դաշինքի մյուս 31 առաջնորդները, ընդգծվում է անդամ երկրների «անսասան հանձնառությունը» 5-րդ հոդվածին, ըստ որի՝ մեկ անդամի նկատմամբ հարձակումը դիտարկվում է որպես հարձակում ամբողջ դաշինքի դեմ:

Միաժամանակ, հոդվածում նշվում է, որ գագաթնաժողովի ընթացքում եվրոպացի առաջնորդները մտահոգված էին Թրամփի անկանխատեսելի պահվածքով՝ մտավախություն ունենալով, որ նման հայտարարությունները կարող են խաթարել դաշինքի միասնականությունը եւ լրացուցիչ խրախուսանք դառնալ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի համար:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել Հայաստանի բարձրասիճան պաշտոնյաների գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագրերը: Այս անգամ ներկայացնում ենք ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանի հայտարարագրերի վերլուծությունը՝ 2021-2025 թվականների ընթացքում:

Հիշեցնենք, որ Սարգիս Հայոցյանը Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահի պաշտոնը զբաղեցնում է 2023 թվականի օգոստոսի 21-ից: Մինչ այդ՝ 2020 թվականից, ղեկավարել է Գիտության պետական կոմիտեն:

Մնշարժ եւ շարժական գույքը տարիներ շարունակ անփոփոխ է

2021-2025 թվականների հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պաշտոնյայի անշարժ եւ շարժական գույքի կազմում էական փոփոխություններ չեն եղել:

Սարգիս Հայոցյանը հայտարարագրել է Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող երկու անշարժ գույք՝

բազմաբնակարան շենքում գտնվող բնակարան, որը ձեռք է բերել 2016 թվականի փետրվարի 2-ին՝ գնման եղանակով, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածք, որը գնել է 2019 թվականի փետրվարի 2-ին:

Նա նաեւ հայտարարագրել է 1999 թվականի արտադրության MITSUBISHI մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2015 թվականին: Հետագա տարիներին նոր անշարժ կամ շարժական գույք չի ձեռք բերել, ինչպես նաեւ չի օտարել առկա ունեցվածքը: 2025 թվականի հայտարարագրում նույնպես նշված չէ 4 միլիոն դրամը գերազանցող որեւէ թանկարժեք գույք:

Բանկային միջոցների զգալի տատանումներ

Դրամական միջոցների մասով հայտարարագրերում նկատվում են փոփոխություններ:

2021 թվականի վերջում պաշտոնյայի բանկային հաշիվներում առկա էր 784.8 հազար դրամ, մինչդեռ տարվա սկզբին այդ գումարը կազմել էր ավելի քան 1.5 միլիոն դրամ:

2022 թվականի ավարտին հաշիվների մնացորդը նվազել էր մինչեւ 141 հազար դրամ:

2023 թվականին դրամային հաշիվների մնացորդն աճել է մինչեւ 522.7 հազար դրամ: Նույն տարվա վերջում առաջին անգամ հայտարարագրվել է նաեւ 8 707.2 ԱՄՆ դոլար բանկային հաշվին եւ 1.4 միլիոն դրամ կանխիկ գումար:

Սակայն արդեն 2024 թվականին դոլարային հաշվին մնացել է ընդամենը 0.28 դոլար, իսկ դրամային հաշիվներում առկա գումարները նույնպես նվազել են: Նախորդ տարվա 1.4 միլիոն դրամ կանխիկ միջոցներն այլեւս չեն հայտարարագրվել:

2025 թվականի հայտարարագրում երեւում է, որ պաշտոնյան ունեցել է մի քանի բանկային հաշիվներ, որոնց մնացորդները տարվա ընթացքում զգալիորեն փոփոխվել են: Տարեվերջին հաշիվներում մնացել են համապատասխանաբար 184.1 հազար դրամ, 4 հազար դրամ, 49.1 հազար դրամ, 0.28 ԱՄՆ դոլար եւ 20.8 հազար դրամ: Կանխիկ դրամ կրկին չի հայտարարագրվել:

Եկամուտներն աճել են տարեցտարի

Սարգիս Հայոցյանի տարեկան եկամուտները վերջին հինգ տարիների ընթացքում ընդհանուր առմամբ աճի միտում են ունեցել:

2021 թվականին նրա ընդհանուր եկամուտը կազմել է 16.27 միլիոն դրամ, որից 13.67 միլիոն դրամը Գիտության կոմիտեից ստացած աշխատավարձն էր, իսկ 2.6 միլիոն դրամը՝ Ֆինանսների նախարարությունից ստացված այլ եկամուտ:

2022 թվականին եկամուտն աճել է մինչեւ 16.73 միլիոն դրամ: Դրա հիմնական մասը՝ 14.86 միլիոն դրամը, կրկին աշխատավարձն էր, 1.87 միլիոն դրամը՝ Ֆինանսների նախարարությունից ստացված եկամուտ, իսկ 4 251 դրամը՝ Սլավոնական համալսարանից քաղաքացիաիրավական պայմանագրով ստացված վճարումը:

2023 թվականին, արդեն Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահի պաշտոնում, Հայոցյանի միակ եկամտի աղբյուրը եղել է աշխատավարձը, որը կազմել է 15.91 միլիոն դրամ:

2024 թվականին ընդհանուր եկամուտը հասել է 17.55 միլիոն դրամի, որից 15.37 միլիոն դրամը կազմել է աշխատավարձը, իսկ 2.18 միլիոն դրամը՝ եկամտային հարկի վերադարձը:

2025 պաշտոնյայի եկամուտներն աճել են մինչեւ 21.06 միլիոն դրամ: Դրանցից 19.07 միլիոն դրամը Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեից ստացած աշխատավարձն է, իսկ մոտ 1.99 միլիոն դրամը՝ եկամտային հարկի վերադարձը:

Հիփոթեքային վարկի պարտավորությունները

2021 թվականի վերջի դրությամբ Սարգիս Հայոցյանը հայտարարագրել էր բնակարանի հիփոթեքային վարկի 20.5 միլիոն դրամի մնացորդ, որի մարման համար տարվա ընթացքում վճարել էր շուրջ 3.59 միլիոն դրամ:

2022թ. վարկի մարման նպատակով կատարված վճարումները կազմել են շուրջ 3.59 միլիոն դրամ, սակայն հայտարարագրում վարկի մնացորդի չափը չի նշվել:

2023 եւ 2024 թվականների հայտարարագրերում վարկային պարտավորություններ չեն ներկայացվել:

Սակայն 2025 թվականի տարեկան հայտարարագրում կրկին նշվել է բնակարանի հիփոթեքային վարկի մայր գումարի մնացորդը, որը կազմել է 14.57 միլիոն դրամ: Այդ տարվա ընթացքում վարկի մարման նպատակով վճարվել է շուրջ 3.64 միլիոն դրամ:

Ընդհանուր պատկերը

Հինգ տարվա հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սարգիս Հայոցյանի գույքային վիճակը հիմնականում պահպանվել է անփոփոխ: Նոր անշարժ գույք կամ ավտոմեքենա չի ձեռք բերվել, իսկ եկամուտների հիմնական աղբյուրը բոլոր տարիներին եղել է պետական ծառայությունից ստացած աշխատավարձը: Միաժամանակ նկատվում է եկամուտների աստիճանական աճ, բանկային միջոցների զգալի տատանումներ եւ բնակարանի հիփոթեքային վարկի շարունակական մարում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԽՈՒԶԱՐԿՎԵԼ Է ԲՆԱԿԱՐԱՆԸ

«Սյունյաց երկիր»-ը հայտնում է, որ այսօր առավոտյան ժամը 9-ից թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի բնակարանում կատարվել է խուզարկություն: Մոտ մեկ ժամ տեւած փնտրտուքից հետո խուզարկողները հեռացել են Սամվել Ալեքսանյանի բնակարանից:

Նախնական տեղեկություններով՝ խուզարկությունը կապված է խմբագրի որդի Կարեն Լազարյանի՝ «Միասնության թեւեր» կուսակցության հետ ունեցած առնչությունների հետ:

«Հայտնաբերվել» է Կարեն Լազարյանի տիկնոջ պարտքերի ցուցակը՝ գորիսյան մեկ-երկու խանութի, որտեղից նա երեխաների համար ինչ-ինչ պարագաներ էր ձեռք բերել, բայց չէր հասցրել վճարել ու մնացել էր պարտք:

«Հայտնաբերվել» են նաեւ Կարեն Լազարյանի՝ ԱԺ պատգամավորի թեկնածու լինելու վկայականը, ինչպես եւ «Միասնության թեւեր» կուսակցության գովազդային բուկլետ:

Կարեն Լազարյանն այդ կուսակցությունից ԱԺ պատգամավորի թեկնածու էր:

TRIPP–Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը հայտարարել է, որ շարունակվում է TRIPP նախագծի շուրջ գործընթացը, եւ այժմ ընթանում է անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը: Այս մասին, ադրբեջանական APA գործակալության փոխանցմամբ, նա ասել է լրագրողների հետ զրույցում:

Բայրամովի խոսքով՝ իրեն տեղեկացրել են, որ աշխատանքներ են տարվում Հայաստանի տարածքով անցնող, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» ավտոմոբիլային եւ երկաթուղային նախագծի ուղղությամբ:

«Անցյալ տարվա Վաշինգտոնի գագաթնաժողովի ամենակարեւոր արդյունքներից մեկը Հայաստանի տարածքով անցնող «Զանգեզուրի միջանցքի» հատվածի համաձայնեցումն էր: Այդ մոտեցումն աջակցում են նաեւ Միացյալ Նահանգները: Այս ուղղությամբ բանակցություններ են ընթանում ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ: Միեւնույն ժամանակ TRIPP-ի մուտքի եւ ելքի հատվածները գտնվում են Ադրբեջանի տարածքում, ուստի մեզ տեղեկացնում են ամերիկացի գործընկերները: Մեզ խոստացել են, որ գործընթացը շարունակվում է, եւ այժմ փաստաթղթերի նախապատրաստման փուլն է»,- հայտարարել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարը:

Բայրամովը չի ներկայացրել, թե ինչ փաստաթղթերի մասին է խոսքը, սակայն նշել է, որ գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը ադրբեջանական կողմին փոխանցում են ԱՄՆ-ի գործընկերները:

ՍԵՎԱՆ

ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄԸ ՆՈՐ ԹԱՓ ԿԱՌՆԻ

Դատախազության միջնորդագրերի կատարման արդյունքում 2025 թվականի դեկտեմբերից մինչեւ 2026 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Սեւանա լճի ափամերձ՝ բացարձակ նիշից ցածր 68 հողամասերում ապամոնտաժվել (քանդվել) է ապօրինի կառուցված՝ հիմնական եւ ոչ հիմնական 201 շենք-շինություն, «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից լուծվել (դադարեցվել) է 2 պայմանագիր: Ապամոնտաժման աշխատանքները կշարունակվեն լողափնյա սեզոնի ավարտից հետո:

Հիշեցնենք, որ Դատախազությունը 2025թ. դեկտեմբերի 11-ին հայտարարել էր, որ մեկնարկել են Սեւանա լճի ափամերձ տարածքներում՝ բացարձակ նիշից ցածր հողամասերում ապօրինի կառուցված շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքները: Դատախազությունը միաժամանակ տեղեկացրել էր, որ ապօրինի շինությունների քանդման աշխատանքները շարունակվելու են 2026 թվականին:

Դատախազի միջնորդագրերի հիման վրա, ի թիվս այլնի, ապամոնտաժվել են՝

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին փաստացի պատկանող առանձնատան՝ բացարձակ նիշից ցածր հատվածում գտնվող պարիսպները եւ թեքահարթակը (Դատախազությունն առանձնատան վերաբերյալ հայց է ներկայացրել իրավասու դատարան),

ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ Սամվել Նիկոյանի որդու կողմից ապօրինի կառուցված առանձնատունը,

ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար Արմեն Աշոտյանի եղբոր կողմից ապօրինի կառուցված քոթեջը,

Գեղարքունիքի նախկին մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի որդու՝ Կարեն Ռաֆիկի Գրիգորյանի կողմից ապօրինի կառուցված քոթեջը,

ՀՀ ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատան՝ բացարձակ նիշից ցածր հատվածում գտնվող պարիսպը, բետոնե հենապատերը, թեքահարթակը եւ այլ շինություններ (Դատախազությունը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցով, ի թիվս այլնի, պահանջում է Վլադիմիր Գասպարյանից ու նրան փոխկապակցված անձանցից բռնագանձել այս առանձնատունը):

Հիշեցնենք, որ վերոնշյալ միջնորդագրերից բացի, Դատախազության կողմից դատարան են ներկայացվել հայցեր, որոնք, ի թիվս այլոց, վերաբերում են.

Ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 97 հասցե),

«Հարսնաքար» հյուրանոցի վարչական համալիրին (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 50 հասցե), «Հարսնաքար» հյուրանոցի քոթեջներին (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 48/6 հասցե),

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախկին նախագահ, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Սեւան քաղաքի Հանգստի գոտի 3-րդ փողոց 38 հասցե),

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցե),

«Կապավոր» ՍՊ ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Արման Հակոբջանյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 88 հասցե):

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության եւ Գեղարքունիքի մարզի դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում, հանցագործության մասին հաղորդումներ են ուղարկվել նախաքննական մարմիններ, նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Դատախազությունը 2026 թվականի մայիսի 12-ին, հուլիսի 6-ին եւ 7-ին տեղեկացրել էր նաեւ, որ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը միջնորդագրեր է ուղարկել «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) տնօրենին եւ Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարին՝ ՊՈԱԿ-ի եւ Նազիկ Ամիրյանի միջեւ, ՊՈԱԿ-ի եւ Վարշամ Ղարիբյանի միջեւ, ՊՈԱԿ-ի եւ Արայիկ Հայրապետյանի միջեւ, ՊՈԱԿ-ի եւ «Ռաֆիկ եւ Գոռ Գասպարյաններ» ՍՊԸ-ի միջեւ, ՊՈԱԿ-ի եւ «Սեդրակյան Հուսիկ եւ ընկերներ» ՍՊԸ-ի միջեւ, ՊՈԱԿ-ի եւ Խոսրով Ավետիսյանի միջեւ կնքված՝ Սեւանա լճի ափամերձ հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Ի պատասխան քաղաքացիների այն մտահոգության, թե «ինչո՞ւ եք ապամոնտաժում շենքը, եթե այն կարելի է տալ սոցիալապես անապահով ընտանիքներին», տեղեկացնենք, որ Սեւանա լճի 1905.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքները հանդիսանում են ջրածածկման ենթակա եւ ափամերձ պահպանության գոտի: Կառավարության՝ 2008 թվականի դեկտեմբերի 18-ի 1563-Ն որոշմամբ սահմանված է, որ Սեւանա լճի մակարդակի բարձրացման հետեւանքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ջրածածկման եւ ողողման ենթակա տարածքները ներառում են «Սեւան» ազգային պարկի լճի ջրային սահմանից մինչեւ 1905.0 մետր բացարձակ նիշը:

Այսպիսով՝ ապամոնտաժվող կառույցներն «այլ նպատակով փոխանցելու» առաջարկներն իրավական հիմք չունեն, քանի որ՝

Դրանք գտնվում են ջրածածկման ռիսկի ներքո եւ կարող են հայտնվել ջրի տակ,

Դրանց նկատմամբ սեփականության որեւէ իրավունք չի կարող գրանցվել. արգելված է ՀՀ օրենսդրությամբ,

Դրանց գոյությունը վնասում է Սեւանա լճի էկոհամակարգը, լճի մաքրությունն ու ջրի որակը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ Արմավիրի բանտի 5-րդ տեղամասի թիվ 12 խցի ազգությամբ եզդի դատապարտյալին անվտանգության բաժնի աշխատողները ծեծի են ենթարկել եւ տեղափոխել են պատժախուց:

Ի պատասխան մեր տեղեկությունների՝ Քրեակատարողական ծառայության հանրային կապերի բաժնի պետ Նոնա Նավիկյանը հայտնեց. «Առավոտյան՝ ծառայողների հերթական շրջայցի ժամանակ, երկու կալանավորված անձ խցում չեն ենթարկվել ծառայողների օրինական պահանջներին, ինչի համար նրանց նկատմամբ կիրառվել են համապատասխան միջոցառումներ եւ տեղափոխել են պատժախուց»:

Ք. Մ.

ԱՊՕՐԻՆԻ ԴԵՊՔԵՐ

Համայնքային ոստիկանության Բագումի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Վանաձոր քաղաքի «Հուշարձան» թաղամասի մի բնակիչ տան բակում աճեցնում է կանեփ: 31-ամյա տանտերը հրավիրվել է բաժին, բացատրական աշխատանքի արդյունքում հայտնել, որ կանեփն աճեցվել է անձնական օգտագործման համար: Լոռու մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ հուլիսի 6-ին կատարված զննությամբ հիշյալ տան բակում իրավապահները հայտնաբերել են կանեփի 88 բույս: Նշանակվել են փորձաքննություններ:

Նմանատիպ երկու տեղեկություն էլ հուլիսի 6-ին ստացել են Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները: Ըստ մի տեղեկության՝ Մարգարա գյուղի բնակիչ 70-ամյա տղամարդն աճեցրել է կանեփ ու ապօրինի պահել թմրանյութ: Արմավիրի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ տղամարդու բակի ցանկապատի տակ հայտնաբերվել է ապակյա տարա՝ 175 գրամ դեղնականաչավուն զանգվածով: Տանտերը հայտնել է, որ տնամերձ հողամասում աճեցրած կանեփից ինքն է պատրաստել թմրանյութը՝ անձնական օգտագործման համար: Տղամարդը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

Արմավիրի համայնքային ոստիկանների նույն օրը ստացած մեկ այլ տեղեկության համաձայն՝ իր հողամասում կանեփ էր աճեցնում նաեւ Արմավիր գյուղի բնակիչ 60-ամյա մի տղամարդ: Արմավիրի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ տղամարդու տնամերձ հողամասում հայտնաբերվել է կանեփի 9 թուփ, ինչպես նաեւ ընդհանուր ավելի քան 70 գրամ չորացված կանեփանման զանգվածներ: Ըստ տանտիրոջ՝ կանեփն ինքն է ցանել, իսկ կանեփանման զանգվածները չորացրել, մանրացրել ու պահել է անձամբ օգտագործելու համար:

Բոլոր դեպքերով նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԳԱՅԼԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄ

Հուլիսի 8-ին Սյունիքի մարզի Գորիսի համայնքի Քարահունջ գյուղում գայլը հարձակվել է բնակիչների վրա: «Սյունիք Նյուզ»-ի տեղեկություններով՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել 6 մարդ, որոնց թվում է նաեւ 2-ամյա երեխա:

Դեպքի վայր են մեկնել փրկարարներն ու էկոպարեկները: Իրականացվում են որոնողական աշխատանքներ՝ գայլերի ոհմակին հայտնաբերելու եւ վնասազերծելու ուղղությամբ: Հանգամանքները ճշտվում են:

Գորիսի ԲԿ-ի տնօրեն Դավիթ Մաշուրյանը լրատվամիջոցներին հայտնել է, որ Գորիսում գայլերի հարձակումներից տուժածներից մեկի վիճակը ծանր է, մյուս 5-ի վիճակը՝ թեթեւ կամ միջին ծանրության:

ՄԻՋԱԴԵՊ

Հունիսի 25-ին դանակահարություն է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 23:00-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւան քաղաքի վարչությունում տեղեկություն է ստացվել, որ շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը Հաղթանակ թաղամասի 6-րդ փողոցից դանակահարության հետեւանքով ստացած «կրծքավանդակի կտրած-ծակած վերքեր» ախտորոշմամբ «Աստղիկ» բժշկական կենտրոն է տեղափոխել 3 քաղաքացիների:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, Երեւանի քրեական ոստիկանները պարզել են, որ վիրավորներն են Երեւանի բնակիչներ՝ 39-ամյա Արմեն Մ.-ն, 33-ամյա Տարոն Մ.-ն եւ 32-ամյա Էրիկ Ա.-ն:Երեւանի քրեական ոստիկանների կողմից ձեռնարկվում են միջոցառումներ՝ դեպքի հանգամանքները պարզելու, հանցագործություն կատարած անձին կամ անձանց հայտնաբերելու ուղղությամբ: Դեպքի փաստով փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին:

● *Ըստ վիճակագրության՝ ՀՀ-ում հուլիսի 8-ից 9-ը բացահայտվել է հոգեկան ներգործության 7 դեպք:*

ՄԱՐՔ

ՔՊ–Ն ԲՈՅԿՈՏՈՒՄ Է ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԸ

Բերդ համայնքի ավագանու մայիսի 21-ի եւ հունիսի 18-ի հերթական նիստերին ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները չեն մասնակցել: Մայիսի 21-ի նիստին մասնակցել է ավագանու 11, հունիսի 18-ի նիստին՝ 9 անդամ, բոլորն էլ՝ ավագանու «Ջորավոր համայնք» խմբակցության անդամներ: 25 անդամից բաղկացած համայնքի ավագանու կազմում «Ջորավոր համայնք» խմբակցությունն ունի 12, «Քաղաքացիական պայմանագիրը»՝ 11, «Արժանապատիվ սերունդ» խմբակցությունը՝ 2 անդամ: «Արժանապատիվ սերունդ» խմբակցության անդամները նույնպես չեն մասնակցել ավագանու վերջին 2 նիստերին: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 11 անդամները համայնքի ավագանու 2 նիստերը ինչո՞ւ են բոյկոտել, ո՞րն է պատճառը: Ըստ հավաստի աղբյուրների՝ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն իր կուսակիցներին հայտարարել է, որ Բերդ համայնքում ՔՊ-ի եւ «Ջորավոր համայնքի» կոալիցիան պետք է քանդվի: Մարզպետ Ղալումյանը վստահ է, որ «Ջորավոր համայնք» խմբակցությունից ավագանու անդամ կամ անդամներ կանցկացնեն «Քաղաքացիական պայմանագրի» կողմ, այդ կերպ Բերդի ավագանու կազմում կունենան մեծամասնություն, համայնքում իշխանափոխություն կանեն:

2022թ. սեպտեմբերի 25-ին կայացած ՏԻՄ ընտրություններում Բերդում հաղթեց ընդդիմադիր «Ջորավոր համայնք» դաշինքը, սակայն առաջադրված քրեական տարբեր մեղադրանքների պատճառով Բերդ համայնքը 2012-2022 թվականներին ղեկավարած, «Ջորավոր համայնք» դաշինքի նախընտրական ցուցակի 1-ին համար Հարություն Մանուչարյանը եւ 2-րդ համար, համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Հովսեփյանը կալանավորվեցին: Ավագանու 2022թ. նոյեմբերի 10-ի նիստում «Ջորավոր համայնք» դաշինքը համայնքի ղեկավար ընտրեց դաշինքի նախընտրական ցանկի 3-րդ համար Աստղիկ Հակոբյանին: Սակայն որոշ ժամանակ անց իշխանությունը, լծակներ գործադրելով, հասավ այն բանին, որ Բերդ համայնքը ղեկավարելու համար կոալիցիա կազմվեց. համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակվեց ավագանու ՔՊ խմբակցության անդամ Սեւակ Բադալյանը, համայնքի 4 գյուղերում, որտեղ 2022թ. սեպտեմբերի 25-ին ՔՊ-ն ավելի շատ քվեներ է ստացել, վարչական ղեկավարներ նշանակվեցին ՔՊ-ի առաջադրած անձինք: Սահմանամերձ Բերդ համայնքի ղեկավարման գործում վերջին տարիներին փխրուն հավասարակշռություն է, որը հիմա ՔՊ կուսակցությունը փորձում է խախտել: Բերդի համայնքի ավագանու հաջորդ նիստը նշանակված է սեպտեմբերի 8-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌԱՋԱՆԳ ԵՎ ՊԱՐՋԱԲԱՆՈՒՄ

Ի՞ՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՁՆԱՏԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի առանձնատանը իրականացված ցուցադրական խուզարկությունից եւ այնտեղ պահվող կենդանիների մի մասի առգրավումից հետո նոր հարցեր են առաջացել արդեն ոչ թե տեղափոխված, այլ տարածքում մնացած կենդանիների ճակատագրի վերաբերյալ:

ԲՀԿ խոսնակ Իվետա Տոնոյանը հրապարակային մտահոգություն է հայտնել, որ առանձնատան տարածքում շարունակում են մնալ բազմաթիվ կենդանիներ, մինչդեռ աշխատակիցները, ըստ նրա, զրկված են նրանց խնամելու հնարավորությունից: Տոնոյանի խոսքով՝ խուզարկությունից հետո տարածքը կապարակնքվել է, իսկ կենդանիների խնամքն ապահովելու նպատակով արված առաջարկները չեն ընդունվել:

«Աշխատակիցները խնդրել են, որ գոնե մասնագետների ներկայությամբ հնարավորություն տրվի մտնել տարածք եւ կերակրել կենդանիներին, քանի որ այնտեղ կան ձկներ, կարապներ, ձիեր եւ այլ կենդանիներ: Սակայն նրանց թույլ չեն տվել մուտք գործել, եւ տարածքը շարունակել է մնալ կապարակնքված: Արդյունքում մինչ այժմ անհայտ է այնտեղ մնացած կենդանիների ճակատագիրը»,- News.am-ին ասել է Իվետա Տոնոյանը:

ԲՀԿ խոսնակի այս հայտարարությունից հետո ArmLur.am-ը դիմել է ՀՀ քննչական կոմիտեին՝ պարզելու, թե ինչու են քննիչները արգելում կենդանիների խնամքն ու կերակրումը: ՀՀ քննչական կոմիտեի մամուլի խոսնակ Կիմա Ավդալյանը, սակայն, հերքել է այդ պնդումները: «Անասնապահին թույլատրվել եւ թույլատրվում է մտնել եւ կերակրել կենդանիներին, տարածված տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում»,-նշել է Ավդալյանը:

Հիշեցնենք, որ Քննչական կոմիտեի գործողությունների ընթացքում Գագիկ Ծառուկյանի առանձնատնից առգրավվել էին երեք առյուծ եւ մեկ վագր, որոնք տեղափոխվել էին Երեւանի կենդանաբանական այգի: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ առյուծներից մեկը անկել է:

Եթե Քննչական կոմիտեի փոխանցմամբ կենդանիներին իսկապես կերակրում եւ ջուր է տալիս անասնապահը, ապա հանրային շահի տեսանկյունից շարունակում են բաց մնալ մի շարք հարցեր: Մասնավորապես, քանի՞ կենդանի է շարունակում մնալ տարածքում, ի՞նչ առողջական վիճակում են նրանք, արդյոք ենթարկվո՞ւմ են անասնաբուժական մշտադիտարկման, եւ ի՞նչ պայմաններում են պահվում կապարակնքված տարածքում եւ այլն:

Այս հարցերը հատկապես արդիական են դարձել այն բանից հետո, երբ արդեն մեկ կենդանու անկումը հանրային լայն արձագանք է ստացել:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԻ ԴԱՍԱՎԱՆԴԻ

Փաստաբան Ռուբեն Մելիքյանը գրում է. «Իրազեկում եմ հանրությանը, որ ԵՊՀ ռեկտորի պաշտոնը զբաղեցնող անձի ստորագրությամբ ստացել եմ ծանուցում առ այն, որ սեպտեմբերի 1-ից այլեւս դադարելու եմ դասավանդել ԵՊՀ-ում:

Ինձ համար ակնհայտ է, որ այս որոշումը պայմանավորված է իմ իրավապաշտպանական գործունեությամբ ու հանրային ակտիվությամբ, քանի որ ինձ չի ներկայացվել եւ չէր էլ կարող ներկայացվել բուն դասավանդման որակի վերաբերյալ որեւէ նկատառում:

Հակառակ մեծ զբաղվածությանս, Համալսարանական նոր սերունդների կրթությանը տասնամյակներ շարունակ իմ լուման ներդնելու որոշումս առաջին հերթին պայմանավորված է եղել իմ Մայր կրթօջախի նկատմամբ ունեցածս բարոյական պարտավորությամբ: Ուստի Մայր բուհում 23-ամյա դասախոսական աշխատանքս ավարտում եմ հանգիստ խղճով ու բացճակատ:

Միեւնույն ժամանակ, ԵՊՀ ռեկտորի պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնող անձի այս որոշումը դիտարկում եմ որպես կամայականության ու ապօրինության դրսեւորում: Այն փոքր կաթիլ է Հայաստանի «ադրբեջանացման» հրեշավոր ծրագրում, որի կարեւոր բաղադրիչ է գիտա-կրթական համակարգի վերինգը: Այս առումով, իմ հանդեպ կայացված որոշումը ո՛չ առաջինն է, ո՛չ էլ, ցավոք, վերջինը:

ՀԳ. Կրթական ու գիտական գործունեությունս բնականաբար շարունակելու եմ: Մոտ օրերս կհայտարարեմ Մխիթար Գոշի Հայոց Դատաստանագրքի վերաբերյալ մենագրությանս շնորհանդեսի օրը: Շուրջ 6 տարվա աշխատանքս շուտով կհանձնեմ ընթերցողի դատին, ու կտեսնեմ որքա՛ն նման են ժամանակները: Այն ժամանակ նույնպես մարդիկ պայքարում էին Հայաստանը «ապահայիկականացման» ծրագրի դեմ ու նույնպես ենթարկվում էին տարատեսակ հալածանքների»:

ԶԱԽԱՐՈՎԱՆ ԽՈՍԵԼ Է

«Անցյալ տարվա մայիսին Երեւանում Ռուսաստանի դեսպան Կոպիրկինի կողմից ՀՀ պաշտպանության նախարար Պապիկյանին ուղղված բաց նամակում, ինչպես նաեւ բարձր մակարդակի շփումների ժամանակ, մենք հայկական կողմին փոխանցել ենք մեր համատեղ Հաղթանակի հիշատակի նման խեղաթյուրման կատեգորիկ անթույլատրելիությունը:

Ի պատասխան մեզ ասացին, որ սա, ենթադրաբար, «անձնական կարծիք» է եւ չի արտացոլում պաշտոնական դիրքորոշումը: Մինչդեռ, ՀՀ պետական մարմինները հրապարակայնորեն չեն արձագանքել այս հնչեղ հայտարարություններին: Եվ Ա. Հովհաննիսյանի նշանակումը ուսումնական հաստատության ղեկավարի պաշտոնում ենթադրում է, որ նման «կարծիքները» այժմ բարձր են գնահատվում ՀՀ իշխանությունների կողմից:

Թվում է, թե Երեւանը, ձգտելով միանալ «լուսավորյալ» Եվրոպային, միաժամանակ պատրաստվում է միանալ Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմությունը վերաշարադրելու վտանգավոր միտմանը, ինչը անհարմար է արեւմտյանների համար:

Նացիստների եւ նրանց համագործակիցների գաղափարախոսական իրավահաջորդները, որոնք այժմ զբաղեցնում են բազմաթիվ բարձրաստիճան պաշտոններ Եվրոպայում, բացահայտորեն արդարացնում են տեղացի նացիստական համագործակիցներին՝ Վերմախտի հանցագործություններին նրանց մեղսակիցությունը ներկայացնելով որպես «ազգային-ազատագրական պայքար»: Այս գծի հիմնական նպատակներից մեկը նախկին ԽՍՀՄ ժողովուրդների համատեղ պատմական հիշողությունը խզելն է՝ ջնջելով աշխարհը շագանակագույն ժանտախտից ազատելու գործում նրանց վճռորոշ դերի մասին ճշմարտությունը:

Նմանատիպ ռազմավարություն ակտիվորեն իրականացվել է Բալթյան երկրներում եւ Արեւելյան Եվրոպայում: Ինչպես հայտնի է, Կիեւի նեոնացիստական ռեժիմն է ամենահաջողակ եղել այս գործում:

Հավանաբար, սա է պատճառը, որ նրա առաջնորդ Զելենսկին այդքան ջերմորեն ընդունվեց մայիսի սկզբին Երեւանում՝ հարթակ տրամադրելով Ռուսաստանի դեմ նողկալի սպառնալիքներ հնչեցնելու համար: Մեր կարծիքով, սա հայ ժողովրդի հերոսական սխրանքների հիշողության ուղղակի դավաճանություն է, որի փառահեղ որդիներն ու դուստրերը նշանակալի ներդրում են ունեցել մեր համատեղ Հաղթանակում: Նացիզմի ցանկացած փառաբանություն պետք է ենթարկվի հանրային եւ պետական հստակ դատապարտման:

Ցավոք, Հայրենական մեծ պատերազմի պատմության վրա նման հարձակումները լրացվում են հանրապետության ներկայիս իշխանությունների կողմից հայ ժողովրդի պատմական հիշողությունը «վերաձեւակերպելու» այլ փորձերով՝ թաքցնելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության ողբերգությունը եւ վարկաբեկելով Հայ Առաքելական եկեղեցին:

Թե որքանով է սա համապատասխանում հայ հասարակության իրական ձգտումներին, հայերն իրենք պետք է արդարացի գնահատական տան»,-նշել է Զախարովան:

● *Անցած 1 օրում գրանցվել է 15 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 21-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

80 ՏՈՆՆԱ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 9-ին Բեյրութի նավահանգստում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Լիբանանի Հանրապետությանը տրամադրված մարդասիրական օգնության հանձնման պաշտոնական արարողությունը: Հանձնման պաշտոնական արարողությանը մասնակցել են ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը, Լիբանանի Հանրապետության կառավարությանն առընթեր Բարձրագույն օգնության հանձնաժողովի գլխավոր քարտուղար, գեներալ Բասսամ Նաբուլսին, Լիբանանի Ազգային ժողովի պատգամավորներ, ինչպես նաեւ Լիբանանի իրավասու այլ պետական մարմինների ներկայացուցիչներ: Իր խոսքում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը վերահաստատել է Հայաստանի համերաշխությունը բարեկամ Լիբանանի եւ լիբանանցի ժողովրդի հետ՝ ընդգծելով, որ մարդասիրական այս օգնությունը երկու ժողովուրդներին միավորող պատմական բարեկամության, փոխադարձ վստահության եւ համերաշխության հերթական վկայությունն է: Իր հերթին գեներալ Բասսամ Նաբուլսին երախտագիտություն է հայտնել ՀՀ կառավարությանը Լիբանանի համար այս դժվարին ժամանակահատվածում ցուցաբերված աջակցության եւ համերաշխության համար՝ ընդգծելով, որ այս աջակցությունը բարձր է գնահատվում ինչպես Լիբանանի կառավարության, այնպես էլ ժողովրդի կողմից:

Հայաստանի կողմից տրամադրված շուրջ 80 տոննա մարդասիրական օգնությունը ներառում է դեղորայք եւ բժշկական նշանակության պարագաներ, սննդամթերք, ինչպես նաեւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ: Մարդասիրական օգնության բեռը, հատելով Հայաստան-Թուրքիա պետական սահմանի Մարգարայի անցակետը, Լիբանան է տեղափոխվել ցամաքային ճանապարհով՝ Թուրքիայի տարածքով:

ԱՎԵԼԻ ՔԱՆ 10 ՄԼՆ ՄԱՐԴ

Ավելի քան 10 մլն ուխտավոր է մասնակցել Իրանի մահացած գերագույն առաջնորդ Ալի Խամենեիի հետ հրաժեշտի արարողություններին, որոնք անցյալ օրը տեղի են ունեցել Իրաքում: Նման տվյալներ է ներկայացրել սգո միջոցառումների կազմակերպման բարձրագույն կոմիտեն, հաղորդում է ՏԱՍՍ-ը: «Նախնական վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ իրաքյան Նաջաֆ եւ Քերբելա քաղաքներում սգո երթերի եւ կրոնական ծեսերի ժամանակ մասնակցել է ավելի քան 10 մլն սգացող»,- ասվում է կոմիտեի հատուկ հայտարարության մեջ, որը մեջբերել է INA գործակալությունը: Բարձրագույն կոմիտեն խորին երախտագիտություն եւ շնորհակալություն է հայտնել բոլոր պաշտոնական հաստատություններին, սրբավայրերին, անվտանգության ուժերին եւ զինված ուժերին, այդ թվում՝ շիա աշխարհազորայիններին («Ալ-Հաշդ աշ-Շաաբի»), հազարավոր կամավորներին եւ Իրաքի ողջ ժողովրդին՝ Իրաքի տարածքում սգո միջոցառումների հաջող անցկացմանն աջակցելու եւ օգնություն ցուցաբերելու համար:

«Աթենք» Գ

ԻՆՉՊԵ՞Ս Է ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՌՆՈՒՄ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից արտադրությունը վաղուց այլեւս միայն սարքավորումների, տեխնոլոգիաների եւ հզորությունների մասին չէ: Այսօր նույնիսկ գերժամանակակից գործարանը կարող է աշխատել աննախադեպ արտադրողականությամբ, սակայն կա մի բան, որը հնարավոր չէ ստեղծել որեւէ արտադրական հոսքագծի վրա: Հատկապես սննդի ոլորտում, որտեղ յուրաքանչյուր գնման հետեւում մարդու առողջությունը, ընտանիքի սեղանի պարունակությունն ու ամենօրյա ընտրությունն են, վստահությունը հաճախ ավելի կարեւոր է, քան գինը, փաթեթավորումը կամ նույնիսկ գովազդը:



Վերջին տարիներին սպառողների վարքագիծն ամբողջ աշխարհում զգալիորեն փոխվել է: Եթե նախկինում մարդիկ հիմնականում ուշադրություն էին դարձնում ապրանքի արտաքին տեսքին կամ արժեքին, ապա այսօր սկսել են ակտիվ ուսումնասիրել բաղադրությունը, ծագումը, արտադրության պայմանները եւ արտադրողի հեղինակությունը: Սա պատահական փոփոխություն չէ: Տեղեկատվության հասանելիությունը մարդկանց ավելի պահանջկոտ է դարձրել: Սպառողն այսօր ցանկանում է հասկանալ, թե ո՞վ է արտադրում իր սնունդը, ի՞նչ արժեքներ ունի այդ ընկերությունը եւ որքա՞ն պատասխանատու է իր գործունեության նկատմամբ:

Հենց այս պայմաններում են առանձնանում այն ընկերությունները, որոնք տարիների ընթացքում կառուցել են ոչ միայն արդյունավետ արտադրական գործընթացներ, այլեւ սպառողի հետ անմիջական կապ: Հայաստանում այդպիսի օրինակներից է 30 եւ ավել տարիների պատմություն ունեցող, ոլորտի բացարձակ առաջատար «Աթենք» մսամթերքի ընկերությունը: Ընկերության հաջողությունը դժվար է բացատրել միայն արտադրանքի բազմազանությամբ, որակով կամ արտադրական ծավալներով: Շուկայում բազմաթիվ ընկերություններ կարող են առաջարկել նմանատիպ ապրանքներ, ներդնել նոր տեխնոլոգիաներ կամ ընդլայնել արտադրությունը, սակայն ոչ բոլորին է հաջողվում տարիներ շարունակ պահպանել սպառողի վստահությունը:

Սննդամթերքի ոլորտում վստահությունը ձեւավորվում է դանդաղ, բայց կարող է մեկ ակնթարթում կորցնել իր արժեքը: Հենց այդ պատճառով երկարաժամկետ հաջողության հիմքում ընկած է ոչ միայն հաջողված արտադրանքը, այլեւ հետեւողականությունը: Սպառողը ցանկանում է վստահ լինել, որ հաջորդ գնումը նույն փորձառությունն է ապահովելու, ինչ նախորդը, որ որակը չի փոխվելու, որ բրենդի նկատմամբ ձեւավորված սպասումները կմնան նույնը:

Տարիների ընթացքում «Աթենք»-ի հաջողության կարեւոր գործոններից մեկը հենց այդ կանխատեսելիությունն է եղել: Մարդիկ սովորել են ստանալ այն, ինչ ակնկալում են: Սակայն վստահությունը միայն որակի արդյունք չէ: Կան գործոններ, որոնք նույնպես կարեւոր դեր ունեն, օրինակ՝ բրենդի ներկայությունը մարդկանց առօրյայում: Ապրանքանիշը կարող է ունենալ լավագույն արտադրանքը, սակայն եթե այն չի հասնում մարդկանց առօրյա, չի կարող դառնալ մասսայական ընտրություն: «Աթենք»-ի զարգացման պատմությունը նաեւ բաշխման, ներկայության եւ հասանելիության պատմություն է: Ընկերությունը կարողացել է լինել այնտեղ, որտեղ սպառողն է:

Թերեւս ամենամեծ ձեռքբերումը մշակութային ներկայությունն է, հենց այն սահմանը, որը տարբերակում է բրենդը սովորական արտադրողից: Շատերը ստեղծում են արտադրանք, բայց միայն քչերն են դառնում հիշողությունների, ավանդույթների եւ ընտանեկան պատմությունների մի մասը:

Հայաստանում դժվար է գտնել մի ընտանիք, որի սեղանին որեւէ կերպ հայտնված չլինի «Աթենք»-ի արտադրանքը: Ընտանեկան հավաքույթներ, տոնական սեղաններ, արագ պատրաստվող ընթրիքներ, ուսանողական տարիներ, աշխատանքային առօրյա. ապրանքանիշը տարբեր ձեւերով ներկա է եղել եւ կա մարդկանց կյանքի բազմաթիվ փուլերում: Երբ դա տեղի է ունենում, ընկերությունն արդեն մրցակցում է ոչ միայն ոլորտի այլ ընկերությունների, այլեւ մարդկանց հիշողությունների եւ սովորությունների հետ: Սա այն մակարդակն է, որտեղ ապրանքանիշն սկսում է ունենալ ոչ միայն տնտեսական, այլեւ սոցիալական դեր:

Սակայն ժամանակակից սպառողը սպասում է ոչ միայն կայունություն, այլեւ զարգացում: Շուկան անընդհատ փոխվում է, փոխվում են մարդկանց նախասիրությունները, առաջանում են նոր պահանջներ: Այս պայմաններում երկար տարիների պատմություն ունեցող ընկերությունների գլխավոր մարտահրավերն է պահպանել այն, ինչի համար իրենց վստահում են, եւ միաժամանակ շարունակել զարգանալ: Վերջին տարիներին «Աթենք»-ը փորձել է լուծել նաեւ հենց այս խնդիրը՝ շուկա ներկայացնելով նոր արտադրատեսակներ եւ նոր ձեւաչափեր՝ համադրելով տարիների փորձն ու ժամանակակից սպառողի սպասումները: Բացի այդ, վերջերս ընկերությունն իր արտադրական հնարավորություններն ավելացրել է՝գործարկելով գերժամանակակից արտադրական համալիր, որն իր հզորությամբ բացառիկ է ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ տարածաշրջանում:

Ի վերջո, շուկայում երկար կյանք ունեցող ապրանքանիշերի արժեքը չի չափվում միայն վաճառքի ծավալներով, արտադրական հզորություններով կամ նոր արտադրատեսակներով: Եվ թերեւս հենց սա է պատճառը, որ որոշ ընկերություններ տարիների ընթացքում չեն մնում պարզապես արտադրողներ, այլ դառնում են մարդկանց առօրյայի մի մասը:

Իսկ այդպիսի դիրքը հնարավոր չէ գնել, հնարավոր չէ արագ կառուցել եւ հնարավոր չէ «արտադրել» գործարանում:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ԱՆԿՅՈՒՆ Գ

Հրազդանի միկրոշրջանում մի փոքրիկ անկյուն կա, որտեղ առաջին հայացքից արդեն աչքի է ընկնում յուրօրինակ միջավայրն ու ֆրանսիական նրբերանգներով տրամադրությունը:

«Ազնավուր» սրճարան-ռեստորանը, որը գործում է 2025 թվականից, առանձնանում է ոչ միայն իր յուրահատուկ միջավայրով, այլ նաեւ համարձակ գաղափարով՝ Հրազդանում ստեղծել ֆրանսիական շունչ ունեցող հանգստի վայր:

Այստեղ այցելուներին դիմավորում է Էյֆելյան աշտարակի մանրակերտը: Ինտերիերն ու միջավայրը կառուցված են ֆրանսիական մոտիվներով, իսկ խոհանոցը համադրում է ֆրանսիական նրբաճաշակությունն ու տեղական համերը՝ ստեղծելով յուրահատուկ փորձառություն:

«Ազնավուր»-ը տարբերվում է շրջակայքում գտնվող սրճարաններից ոչ միայն իր դիզայնով. այստեղ մարդիկ գալիս են ոչ թե պարզապես սնվելու, այլեւ գեղեցիկ միջավայրում հաճելի երաժշտություն վայելելու համար: Սրճարան-ռեստորանը զարգանալու եւ ընդլայնվելու ծրագրեր ունի: Այս ճանապարհին, ինչպես եւ ստեղծման փուլում, կարեւոր դեր է ունենալու Կոնվերս Բանկի հետ համագործակցությունը: Ի վերջո, ցանկացած ճանապարհ անհամեմատ հաճելի է անցնել վստահելի գործընկերոջ հետ:

Ֆինանսավորումն իրականացվել է Converse SME պրոդուկտի շրջանակում: Conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

ԿԱՐՃԱՄԵՏՐԱԺ ՖԻԼՄԵՐԻ 9-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

Ամփոփվել է Երեւանի կարճամետրաժ ֆիլմերի 9-րդ միջազգային կինոփառատոնը. հայտնի են մրցանակակիրները:

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ անցկացվող փառատոնին այս տարի ներկայացվել են հայտեր 95 երկրից. մրցութային ծրագրում ընդգրկվել էր 39 ֆիլմ՝ 22 երկրից: Փառատոնի հաղթող ֆիլմերն են՝

Փառատոնի տնօրենի մրցանակ՝ «Կյանքը շարունակվում է» (ռեժ.՝ Մերի Վարդանյան, Հայաստան)

Հայաստանի կինոռեժիսորների եւ պրոդյուսերների գիլդիայի նախագահի հատուկ մրցանակ՝ «Վազի՛ր, գետ» (ռեժ.՝ Անաստասիա Օստապենկո, Ռուսաստանի Դաշնություն)

«ԱրմԴոկ» հայկական վավերագրական ֆիլմերի ասոցիացիայի եւ Հայաստանի վավերագրական ֆիլմերի գիլդիայի հատուկ հիշատակում՝ «Դորայի դեղին կոշիկները» (ռեժ.՝ Գոհար Սարգսյան, Հայաստան), «Տեղահանում» (ռեժ.՝ Երվանդ Ռումյան, Հայաստան)

«Կինոտեք» ընկերության հատուկ մրցանակ՝ մինչեւ 2 մլն դրամ արժողությամբ կինոտեխնիկայից օգտվելու հնարավորություն կարճամետրաժ ֆիլմի արտադրության համար՝ «Մայրենիք» (ռեժ.՝ Գոռ Առուշանյան, Լեհաստան)

Գրան պրի լավագույն կարճամետրաժ ֆիլմ՝ «Անգղներ» (ռեժ.՝ Դիան Ուեյս, Ֆրանսիա/Հարավային Աֆրիկա)

Լավագույն կարճամետրաժ խաղարկային ֆիլմ՝ ազգային ծրագիր/դրամային մրցանակ/՝ «Ռոբինզո՞ն» (ռեժ.՝ Մարիաննա Մովսեսյան, Հայաստան)

Լավագույն կարճամետրաժ վավերագրական ֆիլմ՝ ազգային ծրագիր /դրամային մրցանակ/՝ «Դորայի դեղին կոշիկները» (ռեժ.՝ Գոհար Սարգսյան, Հայաստան)

Լավագույն ուսանողական ֆիլմ՝ ազգային ծրագիր/դրամային մրցանակ/

«Աղ» (ռեժ.՝ Տաթեւ Ասատրյան, Հայաստան)

Լավագույն խաղարկային ֆիլմ՝ միջազգային ծրագիր՝ «Գունատ արեւ» (ռեժ.՝ Ադրիան Մոյս Դալլին, Ջավահին Ջենտար, Ֆրանսիա)

Լավագույն ռեժիսոր՝ «Վերնագիր հորինիր» (ռեժ.՝ Կլաուդիա Ֆորտունիակ, Լեհաստան)

Լավագույն սցենար՝ «Կեղծ զարդեր» (ռեժ.՝ Ջեսի Մուսալեմ, Ֆրանսիա/Լիբանան, սցենարի հեղինակ՝ Ջիհադ Հոջեյլի)

Լավագույն դերասանուհի՝ «Բարլեբաս» (ռեժ.՝ Մալու Յանսեն, Բելգիա/Նիդերլանդներ, դերասանուհի՝ Պիտոու Նիկոլաս)

Լավագույն դերասան՝ «Անգղներ» (ռեժ.՝ Դիան Ուեյս, Ֆրանսիա/Հարավային Աֆրիկա, դերասան՝ Էդվին Վան Դեր Վոլտ)

Լավագույն օպերատոր՝ «Իկարոս» (ռեժ.՝ Քրիստոս Կարդանա, Բելգիա/Ֆրանսիա/-Հունաստան/Մեծ Բրիտանիա, օպերատոր՝ Քրիստոս Կարամանիս)

Լավագույն գեղարվեստական լուծում՝ «Մշուշը վերացել է» (ռեժ.՝ Սեյեդ Ալի Ղասեմի, ԻԻՀ)

Ժյուրիի հատուկ մրցանակ՝ «18-րդ գարուն» (ռեժ.՝ Մենուա Հովհաննիսյան, Հայաստան), «Մայիսի վերջին կիրակի» (ռեժ.՝ Ալեխանդրո Բորդիե, Լյուքսեմբուրգ)

Ժյուրիի նախագահն էր կինոռեժիսոր Սոսո Բլիաձեն (Վրաստան), ժյուրիի անդամները՝ դերասանուհի, պրոդյուսեր Ինա Խոջամիրյանը եւ կինոռեժիսոր Արշալույս Հարությունյանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՄԵՐ ՄՐՑԱԿԻՑԸ ՄՐՑԱՎԱՐԸ ՉԷ»

Ֆրանսիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Դիդիե Դեշամն անդրադարձել է ԱԱ-2026-ի քառորդ եզրափակիչում Մարոկկոյի դեմ կայանալիք խաղին արգենտինական մրցավարական բրիգադի նշանակմանը, հայտնում է armsport-ը:

Վճռորոշ հանդիպումը կսպասարկի արգենտինացի մրցավար Ֆակունդո Տելյոն, իսկ նրա օգնականները նույնպես Արգենտինան ներկայացնող մրցավարներ կլինեն: Այս որոշումը ֆուտբոլային հանրության շրջանում որոշակի քննարկումների առիթ է դարձել այն համատեքստում, որ Ֆրանսիայի հավաքականը հնարավոր է եզրափակիչում մրցի հենց արգենտինացիների հետ:

«Մենք պետք է դա ընդունենք որպես փաստ: Ես վստահում եմ մրցավարներին: Մեր մրցակիցը մրցավարը չէ, այլ Մարոկկոյի հավաքականը»,- ֆրանսիացի մասնագետի խոսքերը մեջբերում է The Guardian պարբերականը:

Դեշամը նաեւ պատասխանել է այն քննադատներին, որոնք դժգոհ էին մնացել Ֆրանսիացի մրցավար Ֆրանսուա Լետեքսիեի աշխատանքից 1/8 եզրափակիչի Արգենտինա - Եգիպտոս հանդիպման ժամանակ.

«Հուսանք, որ մրցավարները մեր խաղում նույնքան բարձր մակարդակի վրա կլինեն, որքան մսյո Լետեքսիեն էր»,-եզրափակել է Դեշամը:

Աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչի Ֆրանսիա-Մարոկկո հանդիպումը կկայանա հուլիսի 9-ին: Խաղի մեկնարկային սուլիչը կհնչի Երեւանի ժամանակով կեսգիշերին՝ 00:00-ին:

ՎԵՐՔՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

ԱԱ-2026-ի 1/8 եզրափակիչի Արգենտինա-Եգիպտոս հանդիպման գլխավոր մրցավար Ֆրանսուա Լետեքսիեն հիանալի է վարել հանդիպումը, եւ նրա, ինչպես նաեւ տեսակրկնությունների համակարգի (VAR) աշխատանքի վերաբերյալ որեւէ դժգոհություն չկա: Այս մասին լրագրողների հետ զրույցում հայտարարել է ՖԻՖԱ-ի մրցավարական կոմիտեի նախագահ Պիեռլուիջի Կոլինան, գրում է armsport-ը: Նա մանրամասն վերլուծել է երկու վիճահարույց դրվագ, որոնք ամենաշատ քննարկումներն էին առաջացրել. Մարվան Ատիայի խախտումը Եգիպտոսի չեղարկված գոլից առաջ եւ արգենտինացիների տուգանային հրապարակում Խուլիան Ալվարեսի ու Մոհամեդ Սալահի միջեւ պայքարը:

Ըստ Կոլինայի՝ Ատիան ակնհայտորեն տրորել է Լիսանդրո Մարտինեսի ոտքը: Նա ընդգծել է, որ VAR համակարգը չի գնահատում խախտման եւ դարպասի գրավման միջեւ ընկած ժամանակահատվածը կամ դարպասից ունեցած հեռավորությունը. համակարգը դիտարկում է գրոհի զարգացման ամբողջական փուլը:

«Մոհամեդ Սալահի եւ Խուլիան Ալվարեսի մասնակցությամբ դրվագը գլխավոր մրցավարն ու VAR համակարգի պատասխանատուները դիտարկել են որպես նորմալ ֆուտբոլային կոնտակտ»,- Կոլինայի խոսքերը մեջբերում է ՖԻՖԱ-ի մամուլի ծառայությունը:

Իտալացի անվանի նախկին մրցավարը խոստովանել է, որ ցանկացած մեկնաբանության միշտ այս կամ այն կերպ ուղեկցում է մարդկային գործոնը, սակայն ընդգծել է, որ ինքը որեւէ պահանջ կամ դժգոհություն չունի աշխարհի ընթացիկ առաջնությունում աշխատող մրցավարների գործողություններից:

Հիշեցնենք, որ Արգենտինա-Եգիպտոս դրամատիկ եւ լարված հանդիպման արդյունքում հարավամերիկացիները կամային հաղթանակ էին տարել 3-2 հաշվով՝ նվաճելով մրցաշարի քառորդ եզրափակիչի ուղեգիր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ Է

Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան Օրելիեն Չուամենին այս ամառ կարող է փոխել ակումբային գրանցումը. շրջանառվող լուրերը ֆրանսիացուն կապում են անգլիական «Մանչեսթեր Յունայթեդ» տեղափոխության հետ: Սակայն նման զարգացումներին կտրականապես դեմ է մադրիդյան թիմի նորանշանակ գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն: Ինչպես հաղորդում է Indykaila News-ը, պորտուգալացի մասնագետն արտահերթ խորհրդակցություն է հրավիրել ֆրանսիացի հենակետայինի ապագայի հարցով, գրում է armsport-ը: Մոուրինյուն կարծում է, որ Չուամենիի կորուստը լրջագույն հարված կլինի «արքայական» ակումբի համար: Նոր գլխավոր մարզիչը մտադիր է գործադրել բոլոր հնարավոր ջանքերը՝ համոզելու «Ռեալի» ղեկավարությանը, որ ֆուտբոլիստը կենսական նշանակություն ունի իր նախագծի եւ մարտավարական ծրագրերի համար: Օրելիեն Չուամենին Մադրիդի «Ռեալ» է տեղափոխվել 2022 թվականին ֆրանսիական «Մոնակոյից»՝ 80 միլիոն եվրոյի դիմաց: Ֆուտբոլիստի գործող պայմանագրի ժամկետը «սերուցքայինների» հետ նախատեսված է մինչեւ 2028 թվականի հունիսի 30-ը: Ավարտված 2025/26 մրցաշրջանում ֆրանսիացի կիսապաշտպանը մադրիդյան ակումբի կազմում բոլոր մրցաշարերում միասին անցկացրել է 49 հանդիպում՝ իր ակտիվում գրանցելով 2 գոլ եւ 2 արդյունավետ փոխանցում:

ՆՈՐ ԴԱՐՊԱՍԱՊԱՀ

Միլանի «Ինտերը» պաշտոնապես հայտարարել է Հռոմի «Լացիոյից» դարպասապահ Իվան Պրովեդելի տեղափոխության մասին, հայտնում է armsport-ը: 32-ամյա իտալացին միլանյան ակումբի հետ կնքել է 3 տարվա պայմանագիր, որը նախատեսված է մինչեւ 2029 թվականի հունիսի 30-ը: Այս տեղափոխությամբ Պրովեդելն իրականացրել է իր վաղեմի երազանքը՝ հանդես գալ այն ակումբում, որի կազմում ժամանակին փայլել է իր կուռքը՝ իտալական ֆուտբոլի լեգենդ Ֆրանչեսկո Տոլդոն: Ըստ որոշ աղբյուրների տվյալների՝ դարպասապահի տրանսֆերային արժեքը կազմել է 3 միլիոն եվրո:

Հիշեցնենք, որ Պրովեդելը մայրաքաղաքային թիմի գույները պաշտպանում էր 2022 թվականից: 2022/23 մրցաշրջանում նա կրկնել էր Իտալիայի Ա Սերիայի ռեկորդը մեկ մրցաշրջանում անցկացրած «չոր» հանդիպումների քանակով (21)՝ հավասարվելով Ջանլուիջի Բուֆոնին եւ Մորգան Դե Սանկտիսին, ինչպես նաեւ ճանաչվել էր առաջնության լավագույն դարպասապահ: Բացի այդ, Պրովեդելն իր անունը գրել է Չեմպիոնների լիգայի պատմության մեջ՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Մադրիդի «Ատլետիկոյի» դեմ խաղի ավելացված ժամանակում գլխի հարվածով դառնալով գոլի հեղինակ:

Այսպիսով, նա դարձավ պատմության ընդամենը երկրորդ դարպասապահը, որը գլխավոր եվրագավաթում խաղային իրավիճակից դարձել է գոլի հեղինակ: Ավարտված մրցաշրջանում դարպասապահն Իտալիայի առաջնությունում անցկացրել է 27 հանդիպում եւ բաց թողել 27 գնդակ:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հուլիսի 18-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Կարմեն» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն անձնագիր ստանալու համար

Վազգեն Հակոբյան, 36 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Անձնագիր ստանալու համար ՀՀ քաղաքացիները ներկայացնում են՝

ա) սահմանված ձեւի դիմում (այլ պետություններում դիմումի ձեւը տրամադրվում է ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության կողմից)

բ) ծննդյան վկայական կամ մինչեւ 16 տարին լրանալն ստացած ՀՀ քաղաքացու անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթղթեր, եթե ՀՀ քաղաքացին չի կարող ներկայացնել սույն կետում նշված փաստաթղթերը.

գ) 35 x 45 մմ չափսի երկու լուսանկար (գունավոր),

դ) ծնողների կամ ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցիչների համաձայնությունը (մինչեւ 16 տարին լրանալն անձնագիր ստացողները): Եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը անձամբ չի կարող ներկայացնել համաձայնությունը, ապա ներկայացվող համաձայնության վրա նրա ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի նոտարական կարգով.

ե) կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ (զինապարտները):

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է իրականացվում իրավունքների փոխանցումը եւ օգտագործման թույլտվությունը:

Նարինե Սահակյան, 51 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները հեղինակի կողմից կարող են ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցվել (զիջվել) երրորդ անձանց կամ նրանց տրամադրվել օգտագործման թույլտվություն (լիցենզիա)՝ հեղինակի եւ նրանց միջեւ կնքված համապատասխանաբար՝ զիջման կամ լիցենզային (այսուհետ նաեւ՝ հեղինակային) պայմանագրի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հեղինակային պայմանագիրը կնքվում է գրավոր ձեւով, որն էլ հանդիսանում է կողմերի երաշխիքը, քանի որ տվյալ պայմանագրով կարգավորվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնք վերաբերում են ստեղծագործության օգտագործմանը:

Պայմանագրի կողմը, որի իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են կարող է դատարանի միջոցով պահանջել իր իրավունքների հարկադիր իրականացում:

Մտավոր սեփականության գրասենյակ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Գարշահոտ ու հակասանիտարական վիճակ Երեւանում. երկու դիտահորերից դուրս թափվող կեղտաջրերը ողողել են ամբողջ փողոցը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 9 + 14 + 25 + 29
	Կոտայքի լեռներ	+ 8 + 13 + 25 + 28
	Կոտայքի նախալեռներ	+ 16 + 18 + 31 + 33
	Գեղարքունիք	+ 8 + 13 + 23 + 28
	Լոռի	+ 11 + 15 + 26 + 29
	Տավուշ	+ 12 + 16 + 26 + 29
	Արագածոտնի լեռներ	+ 8 + 12 + 24 + 27
	Արագածոտնի նախալեռներ	+ 16 + 20 + 30 + 34

	Արարատ	+ 18 + 21 + 32 + 35
	Արմավիր	+ 18 + 21 + 33 + 36
	Վայոց ձորի լեռներ	+ 11 + 14 + 25 + 28
	Վայոց ձորի նախալեռներ	+ 18 + 22 + 33 + 36
	Սյունիքի լեռներ	+ 10 + 13 + 20 + 24
	Սյունիքի նախալեռներ	+ 14 + 17 + 25 + 29
	Սյունիքի հովիտներ	+ 19 + 22 + 32 + 36
	Երեւան	+ 19 + 21 + 33 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **09.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*